

16083

МБРД

Сліпачка Світлана

891.99

П-51

Ф-м КПРЛ

1899

118

ՊԵՐՃ (Վիկտ Շահան)

# ՆԵՐԴՆՉՈՒՄՆԵՐ

Ա.Զ.Յ.Յ. ԵԿ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ

ԱՐԴԻ ԿԵԱՆՔԵ



ԳԱՀԻՐԵ

391.99

Դ-52

ԳԻՐԱ-ՏՊԱՐԱՆ ՄԵՏԻԿԵԼՆ ԵՎ ԲԱՐՁՐ

4899

1682

Printed in Turkey


891-99

7-51

ԱՅՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԻ  
ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ

Printed in Turkey

ԱՐԴԻ ԿԵԱՆՔԻ



ԳՐԵՑ

ՊԵՏԱ<sup>Հ</sup> (ՀՅԱՆ ՏԵՇԱՅԻՆ)

Ակա

ուն

լու

այն

եմ

ուն

ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՈՀԻՐԵ

ԳՐԱՎԱՐԱԿԱՆ ԽԵՂԱԲԱՆ ՎԼԵՅԵ

2003

1898

3548

Printed in Turkey

ՅԱՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Զամանակներ զբած ստուգապներու մէկ  
փոքրիկ հաւաքածոն Հրատարակութեան յանձնելու առ  
թիւ, աւելորդ չեմ համարիր մէկ քանի կէտեր ներկայաւ  
ցընել յարդելի ընթերցողներու ուշադրութեանը :

Գրքովիս մէջ ամփափուած են ստուգապներէս միայն  
անոնք որ ազգակի ազգային և յեղափոխուական ժամա  
նակալից կեանքի վանագան անցըերէն Են ներշնչուած .  
անօնցմէ շատերը կը ներկայացնեն ներկաց կեանքի իրա  
կան պատկերներ, կեանք՝ որուն մրրկածուի ամբկածու  
թիւններուն մէջ զտնուած եմ անձանք, պատկերներ՝  
որոնք տեսուած, զիստու ու ճշգրտուած եմ սեփական աշ  
քերով :

Այս ստուգապներէս զատ ուրիշ յեղափոխական եր  
գեր ու տաղեր ալ թէեւ յօրինած եմ, բայց զիստու  
թիւնների պատճառներով, զտնոնք ի ներկայիս ձեռքս չա  
նենալով, բաւականացաց ի լոյս ընծացել առ այժմ ինչ որ  
արդէն պատճառատ ունի ձեռքիս մէջ: Այս ստուգապներ  
ու թուալ կարեւոր մէկ մասը զբած եմ Տարօնի և Սու  
սունի մէջ, զտնոնք պատճառհաման հանած է իմ տարա  
րազդ ընկեր Մուրասր, 1892ի ձմեռը Մուշին Կովկաս

570

39

անցանելու միջային : Այս պարտգայի չնուշիւ է որ, որ տառահման ելլելու վերջ կրցայ ձեւք բերել զանոնք :

Ատանաւորներիս մէկ քանին ող, ինչպէս Տալուրիկը,  
Կիւլիզարը, Հնչակը, Հայուն բաղրը՝ արդին հրատարակւ-  
ուած են գանազան յեղափոխական թերթերու մէջ, բայց  
այդ պատճառ մը չէր որ գոնոնք չկետեցի ներկայ չու-  
ւաքածոյիս մէջ, մանաւանդ որ տնօնցմէ ումանք, ինչպէս  
Տալուրիկը աւելի կոտ նուազ այլափոխաւած ձեւով հրա-  
տարակուած են առէլ առաջ:

Աւելորդ չափութեցի զբայկիս վերջը գնել Տալուրիկի անգլիերէն թարգմանութիւնն ալ, որը յօրինած է նշանաւոր հայասէր ամերիկանին Օր. Այս Պյաքիլէ:

Նաև այստեղ յարձաք կը դատեմ ծանուցանել թէ, նկատելով Տալըորիկ քայլերգի առացած ժարվագականութիւնը և զիւրութիւն մատուցանելու համար որ այդ երգը ամէն տեղ երդուի բուն իր եղանակովը, որը յօրինած է մեր բնիկեր Պրե. Անտոն Ռեսունին, խիստ մաս ժամանակին առանձին կերպով ի լրու պիտի ընծայուի այդ եղանակին երթագական ծայշագրաւթիւնն ալ, և կը յու սանիք որ լու ընդունելութիւն պիտի գտնէ հասարակութեան կողմէ:

Ուզելով բանի մը խօսք ալ ըստէ «Ներշնչութեր» ուս  
լեզուին վրաց, տնտեցմէ տեսնք, ինչպէս գեռ շտուեր  
ալ որ այս հաւաքածոյէս դուրս կը մնան, յատկապէս  
զբած եւ մեծեցնակ բարբառով, թէ՛ գանձնք սցանեղի ժող  
զսիրդին հաւկանալի ընելու նպատակով և թէ միանգաւ  
մայն նմաց մը ընծայելու համար թէ՛ գաւուական, մաս  
նաւանդ մեծեցնակ, բարբառն ալ ունի կամ կրնաց ունել-  
նալ — մտնուանդ եթէ զուտի օտարախորթ բառերին և  
մշակուի, — իր բանաստեղծութիւննը, և թէ, հակառակ  
իր առերեւոյթ կօշտութիւնն, ունի իր մէջ թափուն համ-

բեր որանք հետի են արհամարձելի ըլլովէ և որոնց ուս կոյն, գմբաղպարար, երթեր չեն կառ շատ քիչ են ու-  
շազբութեան տանուած կառ շահագործուած : Սասանի  
վերաբերեալ մէկ քանի ոստանաւորներս ալ զրած եմ  
Աստունի և Մուշի խառն բարբառներով, որոնք արդէն  
իրարու շատ մօտ են, երբեմն ալ զրած եմ բարբառին  
խառն սովորական աշխարհի լեզուի հետ : Վերօդքեալ-  
ներին զատ ուրիշ զանազան պատճառներ ու հանգա-  
մանքներ ալ, ինչպէս տեղի, ընթերցողներու, միջավայրի  
և տպաւորութիւններու այլազանութիւնը և այս ամէնուն  
հետ՝ շափերու և յանգերու կաշկանդամները իրենց աղ-  
գեցութիւնը ունեցած են իմ գործածած լեզուին և ոճե-  
րուս վրայ : Այս գիտնալով հանգերձ, ինչ որ ալ ըլլաց  
արիշներու զատաստանը այդ մասին, ես հարկ չդատեցի  
այլազանութեան այդ զրաչմը եղծանել առաջերէա՞ անոնց  
լեզուին մէջ նոր փափոխութիւններ մոցներով :

Ոտանաւորներին մէկ քանիին սոսրեւ լեզու ական ,  
տեղագրական , երրեմն աղ պատմական ծանօթոթիւններ  
դրի : Կը յուսում թէ այդ ծանօթոթիւնները թէ աւելի  
զիւրահամականալի և թէ աւելի շահագրգիռ պիտի կա-  
ցուցանեն այն ոտանաւորները որոնց կը վերաբերին :

Ապագայ թիւրիմացութիւններու տեղի շթովու համար, հոս արիշ զիտողութիւն մ'ալ ընել խիստ կարեւ առ և անհրաժեշտ կը նկատեմ: Յեղափօխական երգերու հաւաքածոյ մը չկրնար և պէտք չէ՝ նկատուիլ յեղափօխական սկզբունքներու, բազոքական հայեացքներու իր բացարօշ փարզապետարան մը, անկէ չեն կրնար թե ըստքուիլ, անոր վրաց չեն կրնար կազմադրուիլ յեղափօխական արարքներու գործնական ձեւերը, ուղղութեան գծերը: Այսպիսի հաւաքածոյ մը ներչնչուան մը կրնաց ըլլալ բայց ոչ վարդապետարան մը, կրնաց սկզ.

որեւ բայց ո՞չ զեկովալորել կատարելապիս կրնդունիմ, և կարծեմ ամէն որ պէտք է բնդունի, թէ՝ յեղափոխութիւն զործին մէջ՝ միայն ներչնչումը և անոր առաջ բերած խանդավառութիւնը բաւական չեն ակնկալուած արդիւնքը առաջ բերելու համար, — նոյն խոկ կրնան երբեմն վեասակար ալ հանդիսանալ, — նմէ ներշնչումին չետ չլուզընթանայ լուրջ, հեռատես, նպատակի և ժամանակի յարմարալ զեկավարութիւնն մ'ալ: Երգը կրնայ յեղափոխութիւն նաւուն առագաստը գողաւորել ու անոր յառաջխաղացաթեան նախառել, թէեւ անոր զեկը կոս կողմնացցը չի կրնար ըլլալ: Առանց այս բժիշնումին, մարին թերը չեն ունենար այն ազատութիւնը որով կարենան բարձրախորիչ խոյանար:

Ասոր հակառակ բարձրավին առանց սպեսորիչ շոնչի մը, առանց յափշտակութեան, առանց երեւհայութեան պացքներու, առանց երկնացին կոյծի մը ելեկորացոցիչ արդեցւթեանը, զժուա՞ր թէ մեծ գործեր զլուխ հանտին: Խանդավառութիւնն է օր կը մէջ մարզը գերագոյն անձնութութեան, և խանդավառութիւնը չի ծագիր միայն չոր ու ցամաք միլիստափայութեամբ, տրամաբանուկան պազարիւն գտառզութիւններով: Յեղափոխութիւնը պէտք ունի ո՞չ միայն համազման, այլ և ներշնչման, ո՞չ միայն ձրագրի այլ և երգի: Ոիրենք ոգեւորիչ, ազատաշոնչ երգը, բայց չարհամարհենք փորձառութեան և խասառութեան ձայնն ալ:

Հայութեան ներկայ ձգնաժամին մէջ, մինչ շատերու արինը առանձ է, և անտարբերութիւնը, վհասանութիւնը և որիչ աւելի ցաւալի երեսյթներ կարծես միարանած են մեծամասութեան սրաերէն մարելու համար աղջապին մերածնութեան ակնկալութիւնները, շատ պիտի միի թարախ և նպատակիս հասած պիտի համարիմ խորպինը՝

եթէ ներկայ գրքայկը, ուրիշ յեղափոխուկան հասած գուշաթիւններու հետ, իր փարր ի շատէ կազզութիչ և ոգեւորիչ ապաւորաթիւնն ունենայ հաստրակութեան մային ու սրտեն վրայ: Նպատակիս հասած պիտի ըլլամ, եթէ զրբացի նպատակ յաղոխովին զգացնելու թէ, իր վիճակին, իր յեղափոխութիւն գործին վրայ պէտք է ընէ ընդհանուր անդրագարձութիւն մը, թէ այդ անդրագարձութեան պէտքը պլ եւս հարկեցոցիչ պահան ջը մը գարձած է իրեն համար, և թէ՝ այդ պահանջրի յրացումին կախում ու նի առիք վերջ յեղափոխութիւն գործին զրաւիլը աղնայինի տղիի մը վրայ որը կարենալ տանիլ գալն զէալ ի բաղձացեալ նպատակակիւը:



## ՆԱԽԵՐԳԱՆՔ

Ն Ո Ւ Ա Դ

Երբ ինձ Մուսան Տրյան անզարդ այս ֆլեւար,  
Ըստ, Երգե՛ Տրյանը բաղդր Հայերն ու.  
Այլ եւ անոնց անկեալ ողին ու խոհարի  
Բարձրացընդ քրիոն մի տուր թելերն ու.

Յուսա՛ մի օր ալ առեժիս զուարքաւար  
Հվեցընելի այս լարերով երերն ու:—  
Այն օրէն վեր՝ մատներս անշարժ յեւ մթնար,  
Կը շօշափեն միշտ թելերը բըրբըռուն ու.

Ճա՞մ աղեսներ զուժեցի եւ Տրյանական.  
Երգեցի ալ բեպէս երգեր մարտական.  
Այլ դեռ ուրախ լարը ֆլարիս զբած յեւ.

Իսկ ոե օր մ'ալ պիտի յերգել յադրական,  
Ու ցըսծութեան թելիկ նըս ալ չի զբանեմ,  
Լա՞ւ է յարին զարնել ֆլեւար, ու փըշրեմ:

ՏԱՆԴԷԻ “ԴԺՈՒՔԻ, ԻՆ  
Գ. ԵՐԳԻՆ ՀԱՏՈՒԱԾ ՄԲ<sup>(1)</sup>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — Դժոխին մուտքը. — Հանդիպում այն հոգիներուն որ անպարսաւ եւ անզովես ապրեցան. — Անո՞ց տանջափին նկարագրութիւնը:

“Դըռնէս կերթան մէջ ցաւատանչ քաղաքին,  
Դըռնէս կերթան մէջ անվախճան տանջանքին,  
Դըռնէս կերթան մէջ կորուսեալ ամբոխին :

Արդարութիւն դըրգեց իմ վեհ Արարիչու.

Աստուածային կարողութիւնն հաստեց զիս,  
Խմաստութիւնն անհուն և Սէրն առաջին :

Զեղան քան զիս նախաստեղծ իրք՝ բայց միայն  
Յաւերժականք, և ես յաւերժ կը մընամ:  
Թողէք մէկդի, ո՛վ մըտնողներ, ամէն յըյա:

Այս խօսքերը նըսեմաստուեր մութ գոյնով  
Տեսայ մի գրան կամարին վրայ քանդակուած.  
Ուստես. «Վա՛րպետ<sup>(2)</sup>, անո՞ց իմաստն ինձ խիստէ,,

(1)ԱԵյարման չենք նկատեր Տանդէին աշխարհաբար նայենքի բարզմանուրեան այս փոքր նմուշը զետեղել ազգային և յեղափոխական կեանին ներուածներու հաւաքածոյի մը մէջ: Գրուածքը բատակաւորինն է «անոց առաւ եւ անզովես ապրովիւնոն» կամ, ուրիշ բառով, անուազքերներուն, որոնք մեր մէջ այ մեծաստանի բիւն կը կազմեն: Անսարքեները եւ «չեղոք»ները պահանջանելի ին պատիսականին առաջին պարտականութիւնն է:

(2)Հոս խօսողը Տանդէին է. խօսակիցը, վարպետը, գլուխիոսն է՝ որ կառաջնորդէ ներքոյը դեռ ի Դժոխ:

Եւ ինքն ինծի, իբրեւ մի անձ խելամուտ .

«Այսանեղ պէտք է ամէն կասկած փարատել,  
Պէտք է ամէն ըստորնութիւն մեռնի հոս :

Եկանք այնտեղ, ուր որ արդէն քեզ ըսի՝

Թէ պիտ տեսնես չարչարակիր ամբոխներն  
Խմացութեան որք բարիկն են կորուսած ::

Եւ յետ որոյ ձեռքը ձեռքիս մէջ դըրաւ

Դէմքով զըւարմ, որմէ խրախոյս ես առի,  
Գաղտնածածուկ իրերուն մէջ զիս մըտացոց :

Հոն հեծեծանք, կոծ, բարձրագոչ վայնասուն

Կը թընդային աստեղազուրկ օգն ի վեր,  
Մինչ զի մէկէն ես արտասուել ըսկըսաց :

Լեզուք կերպ կերպ, քըստմնասարսուո բարբառք  
Ճանոտ,

Վըշտացօդ բանք, ձայնարկութիւնք բարկաճայիլ,  
Սուր ճիչք, կերկեր թառանչք, ու շոյնդ ծափերու

Կը կազմէին խուլ խառնածայն որ յաւէտ

Մըշտաղիշեր այն օգին մէջ պրտուտկի,  
Ինչպէս աւազ՝ երբ վեր հանէ զայն մըրրիկ :

Եւ ես, զի գլուխս էր մալունմամք պաշարուած,  
Բոի. «Վա՛րպետ, այդ ի՞նչ լրաեմ, ո՞րնչ է այդ  
Ամբոխն որ թւի այդպէս ցաւոց մէջ նրկուն ::

Եւ ինքն ինծի. «Եղերական այս վիճակ

Բաժինն է հեղ հոգիներուն այնպիսեաց

Որ անպարսաւ և անդովեստ ապրեցան :

Խառնըւած են այն վաս գտափին հրեշտակաց  
Որ Աստուծոյ դէմ ապրստամբ չի գտրձաւ,  
Ոչ ալ եղաւ հաւատարիմ, չէզոք մնաց :

Երկինք վանեց զայնս որ չըլլայ գեղազորկ,  
Ոչ ալ զիրենք սանդարամետն ընդունի,  
Զի չըտանան չարքն անոնցմով ո՛չ մի փառք:  
Եւ ես . «Պա՛րպետ, ի՞նչ իրենց ծանր է այնքան  
Որ տայ իրենց այդպէս ուժգին մորմոքել»  
Պատառխանեց. «Մհա կրսեմ քեզ հակիրճ .

Սոքո չոնին ամենեւին մահուան յոյս,  
Եւ իրենց կոյր կետին է այնքան ըստորին,  
Որ այլ ամէն պիճուկի են նախանձու :

Աշխարհ մերժէ անոնն անոնց համբաւել.  
Արդարութիւն և զըթութիւն կանարգէ .  
Չարժեր խօսիլ վրանին, այլ տե՛ս և անցիր»:

Երբ նայեցայ շուրջըս, տեսայ մի դըրօշ,  
Որ շըջելով այնքան արադ կընթանար,  
Որ գագրումէ թըւեր խոպառ զայրացկոտ .

Եւ հետեւ անոր մի շարք խուժանի  
Երկա՞ր այնչափ, որ հընար չէր ինձ երբեք  
Կարծել թէ մահ այդքան շատ կեանք էր լուծեր:

Այդ ամբոխէն ճանչնալէս վերջ քանիներ,  
Տեսայ ճանչցայ և ուրուականն այն անձին  
Որ վատարար բարձիթողումն ըրտւ մեծ :

Եւ խելամուտ եղայ խկոյն անկասկած  
Թէ պյա խուժանն էր սինլըքոր վատերուն,  
Թէ Աստուծոյ թէ թըշնամեացն ատելի :

Այս ապիրատք, որ չեղան բնաւ կենդանի,  
Էին խապառ մերկ, և զիրենք անխընայ  
Կը խայթէին դուեխք, պիծակք այնուեղի :

Կը զըծէին անոնց գէմքերն արիւնով,  
Որ արտասուաց հետ իրենց ոտքը կիջնէր,  
Ուր գետնաքարչ զազիր որդեր ծըծէին :

Թարգմ. 1897, Լոնսոն

## ԶՈՒԻՆ ԿԵՑՈՒԻԿԻ ԿՌԻՒԻՐ

Պաշգալէի լերանց մէջտեղ՝  
Չուխ կըրճին մէջ մեծ և շըքեղ  
Մի տեսարան է պարզուեր .  
Ելէ՛ք տեսէ՛ք, Հայոց քանիք .  
Անդ կանդներ է Ադրիսպասեան ,  
Ուրախ լուրեր տարեր ի վան :

Քըսան և մէկ տարու գեռ նոր,  
Դէմքը քաջի, քալուածքը ուզ :

Արլատովն առիւծ, բաղկաւ հրզօր,  
Դեռաբուսիկ մօրուսին աէզք.  
Անդ կանգներ է Ագրիպալասեան,  
Աւրախ լուրեր տարէք ի Վան:

Հրացան ուսին, ձեռքը նիզակ,  
Աչքն ցայտէ կըրակ ու բոց.  
Վարժակետ երբեմն, այժմ աւազակ,  
Իւր շորջ կան եօթն այլ քաջք Հայոց.  
Անդ կանգներ է Ագրիպալասեան,  
Աւրախ լուրեր տարէք ի Վան:

Ինքն և եօթնեակ իւր քաջ ընկերք  
Բոլորն ալ են Վանցի տըղերք.  
Հայլենիքին ուխտ են կաղեր  
Իրենց արիւն տալ ի նըւէր.  
Կեցցե՞ն ընկերք Ագրիպալասեան,  
Աւրախ լուրեր տարէք ի Վան:

Աղատանէր այս նոր խըմբակ  
Վանէն Հէֆթւան դան և զընան.  
Զարնեն սպաննեն թուրքուրդ փայրագ,  
Վըրէժ հանեն հընդաղարեան.  
Կեցցե՞ն քաջեր Ագրիպալասեան,  
Աւրախ լուրեր տարէք ի Վան:

Ինչ որ խօսի այս հրոսագետ,  
Ինչ որ գրը յիւր Օբագիր,

Հայոցս համար են վըրկաւէտ  
Թէ արկանենք զանոնք ի կիր.

Ահա խօսի Ագրիպալասեան,  
Աւրախ լուրեր տարէք ի Վան:

“Դարուս մէջ տա՛մն և իններորդ  
Ազրիւ շմշել թէ կողէ մարդ,  
Զի կայ աւսով այլ մըթնուրորտ  
Աղատան թնան սուրբ օդէն զատ.”

Այսպէս զըրէ Ագրիպալասեան,  
Աւրախ լուրեր տարէք ի Վան:

“Լաւ է աղատ կեանք մի տարի  
Քան ծառայել միշտ օտարի.  
Լաւ է մեռնիւ մահուամբ արի  
Քան թէ ազրիւ ըստրուկ գերի.”

Այսպէս գոչէ Ագրիպալասեան,  
Աւրախ լուրեր տարէք ի Վան:

“Ագր, Պատրէարք զո՞ւր բողոքէ,  
Զո՞ւր խընդրէ, Թուրքն անողոք է.  
Աւզակութիւն սուր բողոք է  
Բըսնակալին զեղծմանցը գէմ.”.

Այսպէս գոռայ Ագրիպալասեան,  
Աւրախ լուրեր տարէք ի Վան:

Ըստ, իջաւ իւրովքն ի դաշտ . . .  
Ամիս մէջ որ շահատակէր,

Երբ օր մ՞հեծեալ զօրաց մի վաշտ  
Թէմն եւսւ, — ինք հետեւալ էր.

Բայց չի վախցաւ Ազրիպատանան,  
Ուրախ լուրեր տարեք ի Վան:

Կրրակ տեղաց երկու կողմէն,  
Հայք ձի հեծեալ հաւասար զլորեն.  
Թըւով ցանցաւ, իսկ սըրտով ջան,  
Մահ կը ոբիուեն ի ձախ և յաշ.

Թուրք թաւալէ Ազրիպատանան,  
Ուրախ լուրեր տարեք ի Վան:

Յերկնից էր՝ թռաւ ջուխտ մի զբնդակ:  
— Այդքան ուատուի թռուրք արժան չեն.  
Հայոց կողմէն զօյդ մի աւզակ  
Զարկուան, երկուքն ալ ի լանջէն.

Լանջէն զարկւաւ Ազրիպատանան,  
Ուրախ լուրեր տարեք ի Վան:

Վերջին անգամ մինչեց այսակէս.  
Ուրախութեամբ կը մեռնիմ ես,  
Իսկ դու սըրբէ՛ քու արտասուք,  
Քա՛զզր հայրենիք, մի՛ կտղեր սուզ:

Ողջո՞յն, քաջեր Ազրիպատանան,  
Ուրախ լուրեր տարեք ի Վան:

«Կարմիր արխւն, կանաչ արեւ  
Զանցեցի քեզ, մինաս բարե՛ւ,

Փայիի՛ հայ դրօշ բերդիդ վերեւ,  
Ինձ շա՞տ թէ տաս գավինի տերեւ.

Ողջո՞յն, քաջեր Ազրիպատանան,  
Ուրախ լուրեր տարեք ի Վան»:

Փակեց շըրթներն, աչերն ալ հետ,  
Բնկերին մօտ վլուուաւ՝ շունչ ետ.  
Դէմքն էր պոյծառ, ճակատն էր ջինչ  
Մինչ զի կարծես թէ կայլ ի նինջ.

Նընչէ հեղիկ Ազրիպատանան,  
Ուրախ լուրեր տարեք ի Վան:

Ավ հին քաջաց նոր պայտալատ,  
Մեռա՛ր որ մենք ապրինք աղատ.  
Հայոց սըրտեր հանեցիր թունդ,  
Զենք մնուանար քու վեհ անունդ:

Անմահացաւ Ազրիպատանան,  
Ուրախ լուրեր տարեք ի Վան:

Թուրքէր կոչեն քեզ չար չըրոս,  
Մենք քեզ ճանճանք աղնիւ հերոս.  
Անոնք կոչեն թող ասպատակ,  
Մենք կանուանենք քաջ նահատակ:

Անմահացաւ Ազրիպատանան,  
Ուրախ լուրեր տարեք ի Վան:

Վարդակարմիր արեանդ հեղում  
Պլազաբերէք քէն և ցասում,  
Եւ հասցընէ Հայոց երկիր  
Նոր հայկազունք վըրէժխընդիր :

Անմահացաւ Ագրիպասեան ,  
Աւրախ լուրեր տարէք ի Վան :

1889, Կ. Պօլիս

### ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

— Խ ո չ ո ւ —

Զուխ-Կէտուկի գէտրը րիչ շատ ծանօթ է ամենուն :  
Գուլաբսըզեան և Ագրիպասեան անունով երկու  
Վանեցի երիտասարդներ , որոնք արմէնիական էին : Ակա  
րանի ընկերներու հետ կազմած էին գինեալ խումբ մը՝  
ասպատակային կամ թերեւս տարբեր կարգի յեղափոխա-  
կան նպատակով մը որը իրենց կը բացատրէին «զանրի  
գոլութիւն» անուան տակ : Ասոնցմէ փոքր խմբակ մը ,  
ըստ ոմանց միայն երեք հոգի՝ որոնց երկուրդ վերը յիշ-  
ուածները , Պաշգալէի մօտ Զուխ-Կէտուկի մէջ յոնկար-  
ծական յորդակում կրերով թուրք հեծեալ ոստիկաններէ ,  
քաջութեամբ կը պաշտպանուին . իրենցմէ երկուրը կը ո-  
պաննուին , իսկ երրորդը՝ Պալաբարքան , կը յոնկարի  
փախչէլ : Քէտրին մանրանանութեանց վրայ որուած  
տեղեկութիւնները իրարու հակասական են : Ի՞չ որ ու-  
րվան սակայն գէտրին իրական որորագանները , ոս յոցա-  
նի է թէ իր ժամանակին մեծ ողեւորութիւն և ցնցում  
առաջ բերաւ այն , և ասոր ամենազիլսաւոր պատճառնե-  
րէն մէկն ալ Վանաց կուսակալ Խալիլ ալէյի աղմկայց

Հեռագիրն էր , որը ամբողջութեամբ հրատարակուեցաւ  
կ . Պօլի թերթերուն մէջ և որու հրատարակութեան  
յաջորդ օրն իսկ յիշեալ կուսակալը Օսմանլիյէ ականա-  
կուռ պատուանիշանով կը վարձատրուէր Սուլթանէն :

Այդ հաշակաւոր հեռագրի թողած տպաւորութեան  
տակ գրած եմ վերագրեալ տողերը , Հիմուելով անոր  
տուած տեղեկաթիւններուն վրայ՝ որմաք յեաց բոլոր-  
վին շըստուգուեցան : Այսպէս , երգին մէջ իրը զիմուոր  
հերսո փոխանուկ Ագրիպասաեանի անուան՝ առաջին ան-  
գամ Գուլաբսըզեանի անունը գրած էի , բայց յեաց զիմո-  
վըննութեամբ սուուգուեցաւ թէ մեռնող կորդիքը Ագրիպ-  
ասանեանն էր և ոչ թէ Գուլաբսըզեանը : Նոյնպէս կու-  
սակալին հեռագրիրը կը սումրը եօթը անդամներէ  
կը բարդիանար որոնք բոլորն ալ Վանեցի էին . մինչդեռ  
վերջին հաստատուեցաւ թէ մեռնող բաջերէն մէկը , Վար-  
դան Կօլօշեան (Յարութիւննեանց) , Կովկասցի էր :

Ագրիպասաեանի զրաբանն եղած էր յիշատակարան  
կամ օրագիր մը , նայն Ագրիպասաեանի կամ թերեւս Գու-  
լաբսըզեանի զրչէն եղած , և որմէ բազուածներ կը պա-  
րանակէր կուսակալին վերցիշեալ հեռագիրը :

Այդ օրագրին երկու կէտեր ներշնչած են բերթ-  
ուածիս 7րդ և 13րդ տունները : Օրագիրը այսպէս կը բա-  
ցատրէր խմբին կադեւթեան պատճառը . «Տանուիննե-  
րորդ դարւուս մէջ ապրու մարդուն համար Ագրատութենէ  
զիս ուրիշ միջնորդ մը յորույն կարենայ շնչէլ» :  
Օրագրալը , իրագեկ այգափոխ ձեւնարկի մը սպաննացող  
վտանգներուն , կը սուր . «Աւրախութեամբ կերթաւ մեռ-  
նելու . իսկ գու , բա՛զցը հայրենիք , որքէ՛ արտասուրդ ,  
և ինձի համար սուր մի՛ բաներ» :

Քերթաւածիս տուի Պէշիլթաշեանի ծանօթ «Զէյ-  
թունցի կործիձի» («Յու զո՞վ խնզրես») երգին ձեւը ,  
ո՞չ թէ անձանէ քերթողին նմանելու յաւանութեամբ ,  
ոչ այդ երգի ամենուն ծանօթ եղանակալը երգերու հա-  
մար աղգային նոր կեանքի հերոսներէն մէկան յիշատակը :

## ՆԱՀԱՏԱԿ ՍՄԲԱՏԻՆ

### ՄՈՒ ՈՂՔԸ

Սմբատ ովրուն, լոյս իմ աշքիս,  
Սըրտիս ծաղին կուն աւազ զ.  
Խըլեց քեզի թուրքը, հոգիս,  
Եղար աղդիդ դուն մատազ:

“Թուրքն է վայրի իբրեւ մայրիս,  
Բախր, լըսեց սսոխը . . . .  
Քանի՛ յիշեմ սիրտըս կայրի,  
Չարը լուծեց իւր սխը:

Բանտը նետեց քել անողոք  
Հայի արեան սովածը .  
Երդիմայ զարկաւ . . . ու քու բողոք  
Չանսաց Հայի Աստուածը:

Կարնոյ բանտին խորշը ձըգուած՝  
Երկար ատեն հեծեցիր.  
Մօրդի փոխան շըդմագ գըրկած՝  
Վերջին շունչը փըշեցիր:

Ողբի ձայներս խո՛ղ ժամանեն  
Մինչեւ երկնից սահմանը,  
Եւ հայ կըտրիճք թող վրէմն առնեն  
Որդուս անժամ՝ մահուանը:

Կարծ ապրեցար ծաղկի մը պէս,  
Շուտ զըրկւեցար արեւէդ.  
Գրնա՛ երկինք՝ հեռու երկրէս,  
Հո՞ն կը հանգչիս ցաւերէդ:

Սիրուհուդ հետ կուգամ և ես,  
Հո՞ն կը գրկենք մենք զիրար.  
Կանիծեմ բաղդս, այլ կօրհնեմ քեզ,  
Զի հայրենեաց զոհ եղար:

1889, Կ. Պոլիս

### ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Սմբ ոս Աւաշկերացի պատանի մ'էր, որ իր առումը աւարտելով կարնոյ Բազոքական հոյերու «Մասեաց Վարժարան»ին մէջ, անկէ Բագասին գիւղը ուսուցչութեան պաշտօնի գացած ժամանակը, 1888ին, Երլնկայի մէջ սոտիկանութեան խուզարկութեան կենթմարկուի. Իր գոլոց ական շարազրութեան աետրակին մէջ կը գտնուի «Հրաւէր առ Հայոս վերնալրայ ստանաւոր մը որու մէջ «թուրքն է վայրի իբրեւ մոյրի» խոսքերը կան եղեր: Քաղաքակիրմ և խելացի կաստվարութիւն մը սցգովիս պատուանեկան զրուածքի մը կարեւորաթիւն շպիտի ընծայէր, կամ շա՞տ թեթեւ պատժով մը խնդիրը պիտի վերջայնէր, քանի որ մանաւանդ զես այն ժամանակը հոյ ազգին գդգոհութեան արտայայտութիւնները նշանակելի համեմատութիւն մը առած չէին: Բայց թուրք պաշտօնեաները այսպէս չեն մասնաւու: Կողեն իւնց վայրենու:

թեան մոտին Սմբատի ըստծը իրենց դործով հաստատել .  
կը ձերբակաղեն ոչ միայն Սմբատը, ոյլ և կարնոյ մէջ աւ  
իր ուսուցիչը Պ. Արքահամ Սէրէմեան։ Սմբատը Նրզըն-  
կայի գեանափոր բանտին մէջ մէկ քանի ամիս մնալէ վերջ՝  
կը փոխազբուի կարնոյ բանտը, ուր աստափի չարչարանք.  
ներու կենթարկուի, մինչեւ որ առաւու մը մեսած կը  
գտնեն վինրը իր խցիկին մէջ. մարմինն վկայ թունաւոր-  
ուածի նշաններ կը տեսնուին։ Տարածալգ պատահոյն  
զիսկն ալ կրօնական թաղմանէ կը զրկուի. աղքատմաց  
և տոմիշողի Արխատակէս Դերձակեան շեպիսկողոսը կը  
հրաժայէ որ առանց կարգ կտուարելու «չաղգամի պէս  
թաղեն Տէրութեան անհաւատարիմ» սրիկոն։ Քիչ ժա-  
մանակ վերջը սրտին ցաւէն կը մեռնի պատանիին թըշ-  
ուառ մայրը, ու անօր ետեւէն չուշանար Սմբատի նշա-  
նածն ալ . . . Այս սրտաճմիկ գէպիերէն վերջ, անզիա-  
կոն հիւարտասոսին միջամտութեամբը բանտէն կազմափ  
և Կ. Պօլիս կուզայ Սմբատի ուսուցիչը Պ. Սէրէմեան,  
որմէ առած եւ ժամանակին այս տեղեկութիւնները։

---

## ՊԱՆԴՈՒԽ ՄՇԵՑԻՆ

(Chateaubriandի “Հե տուանրան էմիգրէ,, Երզին  
նմանութեամբ)

Քուրիկ, ի՞նչ քաղցր և անուշ  
Գայ հայրենիքո ինձ ի յուշ .  
ի՞նչ զւարժ էին մեր օրեր  
ի Մուշ,  
Ով հայրենիք, դու միշտ լեր  
իմ սէր :

Կը լիշե՞ս որ մայրիկը  
Բնիւերիկին<sup>1)</sup> քովիկը  
Մեզ կը սեղմէր գողարիկ իւր  
Գիրկը .  
Շէկ մաղերուն տայինը բիւր  
Համբոյը :

Քուրիկ, դեռ մի՞տքդ է շիտակ  
Մուշեղայ բերգն<sup>2)</sup> աւերակ,  
Աւը ժողվէինք գալնան սոնկ  
Սիպտակ .  
Շուրջ բուրէին բիւր ծաղկունք  
Զերգ խունկ :

Յիշե՞ս այն սուրբ Պոլոգի ակ<sup>3)</sup>  
Աւը քաղէինք մանիշակ,  
Աւը օդն ու ջուրն էր պայծառ,  
Յըստակ .  
Կը գեղդեղէր ծառէ ծառ  
Ծիծառ .

թե  
կը  
իր  
զայ  
կը  
ներ  
գտն  
ուառ  
զիս  
ե. ա  
հրամ  
թաղ  
ման  
ուառ  
նածն  
կան  
և կ  
որմէ

Եւ մեր դաշտը ջրբառէտ՝  
Ուր Մուկատ<sup>4)</sup> և Մեղրագետ  
Կը փողիփողեն արեւէն  
Վէտ վէտ.  
Հասկեր իրաք բարեեն  
Հովիէն ։

Յիշե՞ս Մըշո Սուլթանն 5) այլ՝  
Գըմբեթներով փայլ և փայլ,  
Աւր մեր մօր հետ ուխտ ելանք  
Քայլ քայլ,  
Ի՞նչ թըրթըրուն սըփոէր վանդ  
Իւր զանդ 6) :

Ո՞վ տար ինձ զիմ Հայկանուշ ,  
Եւ իմ այգին , աղան անուշ ,  
Ո՞վ զիս նորէն գարձենէր .  
Ի Մաշ .

June, 1891

ԲԱՐՁՐԱՆ ԽԱՆԹՈՒԹԵՒՆՔ

1) Բաւի Հրիկ. վառարան, նույն ծխսելովզ; — 2) Մուշեց  
զայ բերդ. Մը հարաւային կողմբ վիճած բերդ մ' է; — 3) Ս.  
Գորգի ակ. (Ս. Գեորգի աղբիւ ը) Մը ոյ հարաւային առեւել-  
եան կողմբ անուշանմ արքիւր մ' է, ուղարաւանմ քառ-  
տիներու անտառակէ մը, ու ոսլուքար զբութիք կերպան  
Մեցիի; — 4) Տեղացիկ Մարտա գետ անոնիք կը կոչեն  
Արածանին, Եփասիք արևելյան եփազ, որ կը նեղիք. Մը յ  
դաւը ինիսիսին դեպ առեւմուժ; — 5) Մշոյ Սալթան կը կո-  
չեն տեղացիկ Ա. Կարապետի վանիք, որ իննակին եան վանը  
ալ կըսուի; — 6) Զանգ. զանգակ:

# ՎԱՐԴԵՆԻՍՑԻ ԿԵԼԻԿ

— 2 —

Կռիւ կէր<sup>1)</sup> Վարդենիս Մուսա պէկիփ գէմ .  
Թալին<sup>2)</sup> տանելու Եկած էր էղ<sup>3)</sup> շոն .  
Հաւար էջեցին<sup>4)</sup> , գեղէն Արտօնքէն<sup>5)</sup>  
Ամէն մարդ վաղեց, մարդ չի մընաց տուն :  
Միճակ<sup>6)</sup> խորժ<sup>7)</sup> կէնծ մը նրատած կը շըղէր<sup>8)</sup>  
Քիրիվիլ<sup>9)</sup> մը հետ՝ բուխերիկին խեչ<sup>10)</sup>.  
ԶԲրդու թարբ չի տուեց,<sup>11)</sup> ժըղուն<sup>12)</sup> անուշ էր .  
Զի գրնաց հաւար, մընաց ուր<sup>13)</sup> տան մէջ :  
Մէկ մ' լ' էնադէնաց<sup>14)</sup> Եկաւ ուր կընիկ ,  
Ունքեր պըռլատած, կախած քիթ մըռութ,<sup>15)</sup>  
Վերուց զուր<sup>16)</sup> լաշակ զըլիսոց խորտիկ,<sup>17)</sup>  
Թալեց վըր էրկաց<sup>18)</sup> , լուեց . «Առ զըլիսոդ .  
Ու վերուց ըզթվանկ<sup>19)</sup> որ սունէն<sup>20)</sup> էր կախ ,  
Ինք կերթէր հաւար . . . էրիկ տեղից թռաւ ,  
Սուաւ զջէր<sup>21)</sup> ձեռքից, ու «վա՛խ լըմին վա՛խ»,<sup>22)</sup>  
Սուելով վաղեց , հաւարին հասաւ :

Հաղար ապօին հմալ<sup>23)</sup>կլարիծ կընկլարիք<sup>24)</sup>  
Որ կրուի զրկեն զուրանց էրկլարիք<sup>25)</sup>:

Unr. 1887

ԲԱՐԵԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

1)կար. 2)սաւար. 3)այդ. 4)հաւար ձըգեցին, զիւար  
օգնութեան կանչեցին. 5)Որտոնիր Վարդենիսի բոլ հայա-  
քնակ զել մ' է և անոր արժանաւոր դրացին՝ իր մարդե-

րու խաջութեամբ. 6) մինակ. 7) կտրին. 8) կը խօսակցեր. 9) բարեկամ, միայն Քրդեռու համար կրօսով. 10) եռվ, մօս. 11) թարր չի տուեց—քերք չըրառ, չըրլուց. 12) խօսակցութիւնը. 13) իւր. 14) մեկ մ'ալ անդին, 15) շրբունի, 16) իւր. 17) զեղեցիկ. 18) նետեց երկանը վրայ. 19) թիւ ֆէնիկ, համացան. 20) սիւնեն. 21) զենքը. 22) վաշյինձ վաշյ. 23) այլպէս, այլպիսի. 24) կիներ. 25) երիկներ:

### ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԵ

— ՀՕՉՈՒ —

Վերագրեալը ստոյգ սպատմական եղելութիւն է որ սրատահած է 1887ի աշնան, երբ Մուստ սէյյու, որ Հայեարու երկարաւուեւ բողոքներուն վրայ լոկ ձեւփ մը համար ձերբակուլուած էր, բանտէն փախչելով՝ իրեն զէմ բողորով միս զեղերուն նորանոր վնասներ հասցըների վերջ, իր մարզեալ Վարզենիսի վրայ ուլ յարձուկեցաւ, բայց զեղացւոց բուռն դժմալրութեամբը ետ մդուեցաւ. Երկու Հայեր ծանրապէս վիրաւորուեցան: Գևացիք իրենց յաղթութիւնը կը պարտին մատամիր ուլ իրենց կիներուն աննան քաջապատւեանը սրանք, Սպարտացի կիներուն պէս, կառի կը զրկիլին իրենց գաւակները և ամուսինները: Վարզենիս ուրիշ մէկ բանի ժամանակակից դէպրեւու մէջ ալ նշանաւոր հանդիսացաւ իր բնակիչներու բացութեամբը և սպարտանդը եզաւ Մշաց զաշտին: 1893 տորաց յանուար ամսան սիլվաները, երբ Աւ գուտի զէսրին տաթիւ Վարզենիսի մէջ ուլ ձերբակուլութիւններ և անբացատելի վերագութիւններ կը կառարէին թարք զօրքերը, Վարզենիսի մէկի աւելի կիներ իրենց ձեռքով կրակ տաքին իրենց բնակարաննելուն. հայ կիներու զիսցալնական արս յաւսահատ փարձը շանթահարեց

վայրագ կեղեքիչները օրանք տար վրայ գաղթեցոցին իրենց գաղանութիւնները: Այս գեղին էր հաշտկաւոր և անմուտնալի յեղափոխական Մարգար Վարժապէտը, որ Մշաց զաշտին մէջ յեղափոխական գաղափարի տատչին ծաւալզներէն մէկը եզաւ և որ Աւգուստի յիշեալ դէսրին առթիւ ձերբակալուելով՝ 1894 թուի սիփրները կախազան բարձրացաւ Բարեցի մէջ:

### ԿԻՒԼԻԶԱՐ

— Հ Վ Հ Վ Հ Վ Հ Վ —

### Աղբ առեւանցած աղջկայ մօր

Դեռ երեկ չէն էր և ուրախ մըր առն, իմ խեչ(1) միամիտ(2) նըստուկ ժըղլէր(3) գուն. Էսօր սուռդի մէջ մըր բոլոր քորիվալ(4) Քու ապալ(5) հառչէ, կը քաշէ հասրաթ. Վաշի իմ խորսոտիկ(6) մէկ հատիկ կուլօշ(7), Քուցան իմ աչքեր, տարաւ դքի ձագօ(8):

Տրտիրեք տարու, տեսրդ խորսոտիկ, թըշէր Արտմետու մանկն(9) խնձորիկ. Եօրօր(10) կարւու պէս՝ քէլեռ մանաբրատիկ. Եէկին են ծամերգ(11), դան միր տան ծաղիկ. Խոկ միկա(12) ո՞ւր ես, ո՞ւր ես՝ իմ կուլօ, Վաշ իմ արևուն, տարաւ դքի ձագօ:

Վըր սիպտակ ճակտիդ վէլիքար գաղալ(13), ձըղերն էր սրմա, օրթէն էր արծաթ.

Հալաւ ու քէմեր քրդի կէր<sup>14)</sup>) հազար ,  
Ապըրջան<sup>15)</sup> ու շարք<sup>16)</sup> , դինդ<sup>17)</sup> , նըխշոն ,  
մեղար<sup>18)</sup> .

Խըլեց դքի օտար , իմ պէպա՛խտ<sup>19)</sup> Կուլօ ,  
Փըրցուց դիմ ճիկար , տարաւ դքի ձազօ :

Խարցայ , Զըխուրայ ըմմէն պատանի  
Սավտաբար դասնայ , զըրկէ մասանի .  
Խորանց մէկ լէ չէ քըզիկ արժանի ,  
Զքի Վարդենիսցին հարս պիտի տանի .  
Բայց, ա՛խ , կը խելուիմ<sup>20)</sup> , իմ պէտպա՛խտկոլօ ,  
Եկէր կը տանի դքրդի քուրդ ձազօ :

«Հաւար , Աղաճա՛ն<sup>21)</sup> , հաւար , ուէ՛ն Միրօ<sup>22)</sup> ,  
Արի՛ , նո՛րընծայ<sup>23)</sup> , ե՛լ ըշտապ , ա՛րօ<sup>24)</sup> .  
Հանդէ քուրդ եկաւ , կը տանի աւար ,  
Թալնէ ըզմեր տուն , շո՛ւտ հասէք հաւար .  
Հանդէ կը տանին դիմ աղջիկ Կուլօ ,  
Զիմ աղջիկ տանի էդ դազան ձազօ» :

«Զարկէ՛ք , աօ՛ ճըժեր<sup>25)</sup> , էդ անիրաւ քուրդ ,  
Զարկէ՛ք էդ շնէր , արէք ջարդ ու բուրդ .  
Առէ՛ք կեռ<sup>26)</sup> , կոբալ<sup>27)</sup> , թի , վարոց , խարդան .  
Մանդալ , գերանդի , խանջալ , թուր , հրացան ,  
Հասէ՛ք , ազբըրտանիք , տանին դիմ Կուլօ ,  
Սոնհամ<sup>28)</sup> ձկի զուրտա՞ն , զարկէ՛ք զէդ ձազօ» :

Զարկինք ու զարկւանիք , բայց շանց թիւ շատ եր .

Աղճօն ու Միրօն վըր միջաց<sup>29)</sup> պատերօ<sup>30)</sup> ,  
Աբօն ուր արնի մէջ թապըլտըրկէր .  
Տէրտէր լէ շիւար՝ հաւար՝ կը կանչէր .  
Թափան դըրկեցներ<sup>31)</sup> , բայց ըզքի , Կուլօ ,  
Զկարցան յետ խըլել , ու տարաւ ձազօ :

Լըսի ես ըզքում յետքի ճիկ<sup>32)</sup> վըհատ ,  
Լըսիր հալպաթ դուն լէ զիմ յետքի խրատ .  
«Եամա՞ն իմ աղջիկ , իսկի<sup>33)</sup> չեղնիս վատ ,  
Զեղնի՛ ուրանաս , թորկես<sup>34)</sup> լուս հաւատ ,  
Զեղնի՛ մերկանաս ճակտիդ սուրբ մեռն ,  
Լու՛ է դո՞ն մեռնիս քանց սիրես զձազօ» .

Հրմիա<sup>35)</sup> կասենիք<sup>36)</sup> ու խելուած կերթէնք դէմ ,  
Պալքիմ զիմ աղջիկ քըրդուց ազատեմ ,  
Կամ պարի մեռնիմ իմ աղջկայ ուզըուն . . .  
Ոնդուման<sup>37)</sup> շըլայ , ընկայ վըր հսղուն .  
Կորցեր եմ զիմ ուշք... իսկ ըզքի , Կուլօ ,  
Քաշկըուտէ տանի էդ դազան ձազօ :

Տարա՞ն , վավէլէ՛ր<sup>38)</sup> , զիմ աղջիկ տարան ,  
Զիմ ճըագ ընցուցին<sup>39)</sup> , զիմ տուն՝ րին վէրան .  
Տարա՞ն զծերուկ լէ , տարա՞ն տապնատուն<sup>40)</sup> ,  
Տապնի վըէն զըեցին «Կուլօյի ուզըուն» .  
Տարա՞ն զիմ ջուխտակ աչից լուս Կուլօ ,  
Մըխնի՛ բու ջուխտակ աչից լուս , ձա՛զօ :

Վայլըմին<sup>41)</sup> , Կուլօ , զիմ թորկիր պեղար<sup>42)</sup> ,  
Կիլամ զքու սեւ բախտ , քաշեմ ախ ու զար .

Խօ՛զի<sup>43</sup>) չէր ծընե , խօ՛զի մեսնէր դուն ,  
Քանց եղնէր գերի անկյառ քըրդուն .  
Խօ՛զի չէր խորոտ , խմ աղջիկ կուլօ ,  
Պալքիմ չէր տանի զքըդի շուն ձազօ :

Երկինք , ի՞մալ<sup>44</sup>) դուն իշեցիր<sup>45</sup>) զէդ գործ ,  
Ի՞մալ մօր ւաղջկայ սիրուն արիր փործ .  
Հորի<sup>45</sup>) չինուցիր կէծակ ու քուկուրոտ ,  
Երել ու ջնջել զէդ գաղան ազգ քուրդ .  
Երկիր , թէ չուզիր կուլ տուլ բղձազօ ,  
Պարի կուլ տայիր զիմ աղջիկ կուլօ :

Ա. Հօփս , 1889

### ԲԱՌԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

1) Յովի , մօս .— 2) անկասկած .— 3) կը խօսեիր .— 4) լնանանիք .— 5) ու պատճառով .— 6) գեղեցիկ .— 7) կիւլիզար , աւուեանգուած աղջկան անունը .— 8) ձեզայիր , Մուսա պիկի եղբայր .— 9) կը նեմանիք .— 10) նազամի .— 11) մազերդ .— 12) հիւսու .— 13) արծարե զիւանոց ույիթել ծովերով՝ որ կը կրեն Մըոյ արջիկները .— 14) դուն ունեիր .— 15) ապաւանշան .— 16) մանեակ .— 17) ող .— 18) մկարեն (զոյնզզոյն) զոզնոց .— 19) դժբաղդ .— 20) խելքս կը կորանցունեմ .— 21) աւուզկան նօր անունը .— 22) աղջկան հօրելքայըք որ հարձի զիւլպայեն եր :— 23) աղջկան միւս հօրելքայըք Տ. Յանուրին և բանանան .— 24) մեծ հայր , այսինքն աղջկան պատըք՝ Յեկոր , որ այդ դեպին մեջ սպասնեուեցաւ .— 25) տրամեներ .— 26) երկրազուական զարձիք մը՝ որ յի ծայրը եւկարք հանիլ մը ունի .— 27) հանս զաւազան .— 28) աղջկան նօր անունը .— 29) կուսակի վրայ .— 30) ինեիր .— 31) դրացիներ , .— 32) հիշ .— 33) բան .— 34) քրոլուս , լմանս .— 35) այսպիս .— 36) կը

սին . կառենք , կերթէնք եւն . քեսէ յոզնակիքի վեցաւուրուրիւն ունին , եղակի են , և կը նշանակեն կըսէք , կերթոցիք .— 37) խնիկարձ .— 38) երպերեն ձայնարկութիւն մը՝ իր աւաշզ .— 39) խոեցին .— 40) զերեզմանատուն , տապահութեզման .— 41) երպերեն ձայնարկութիւն մը , վայ ինձ .— 42) անհանգիս .— 43) երանիք թէ .— 44) իշպէս .— 45) նոյեցար , դիմեցիր .— 46) ինչո՞ւ :

### ՊԱՅՄԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

ԿՄԱԼՎՈՐԻ առեւանգման պատճենթիւնը քիչ շատ ծանօթ է ամէնուն . հետեւարար չենք ուզեր գրել հաս ոցդ զեղբին մանրամանութիւնները : Ըսենք միայն թէ կիւլիզար , հաչուկուոր աւազակապետ Մուսա պէյի զոհերէն մին , իր անունը անմանացուց իր զերազոյն արթութեամշուրը՝ սրուշ քրդական հարէմի մէջ սրահպաննեց իր հուսուտքն ու աղջաթիւնը , և Յաղչիք դատարանին առջեւ . հակոսակ ամին աղասանողիքներու որոնց ենթարկուած էր՝ բաջտթիւն ունեցաւ յոցտարարերու թէ ինք «Փրիատոննեայ է և Փրիատոննեայ պիտի մեսնիք» : Կիւլիզարի առեւանգման գեպը ո՞չ միայն խորազէս յուզեց բավանդակ Հայութիւնները , այլ արծագանգ գտաւ եւրազկան մամուլին մէջ ալ . անմահն կլաստօն հայկական խնդրին ինպաստ իր անզրանիկ նամակը գրեց կիւլիզարի տոթիւ . “Daily News” մէջ երեւած այդ յուզիչ նամակը արտասպեցին աշխարհի բարուր քաղաքական թերթերը : Հասարակաց կարծիքի այս ընդհանուր յուզումի առջեւ էր որ , Սուլթանը վերջապես սպասուեցաւ համան հանել որ Մուսա պէյ գտառի է . Պալաց մէջ--բան մը որ երեք չորս տարիներէ ի վեր անգալար կը պահանջէին Մշեցիները , և միշտ կը

մերժուեր: Յնթերցողները նոյնպէս գիտեն այդ գտառաւանին գայթակեցոցիշ մանրաւանութիւնները: Կիւլիզարի առեւանգումը եւ ոչ խոկ դատարանի առջեւ հանուելու չափ կարեւոր բան մը նկատուեցաւ, և Մուսա պէյի դեռ ուրիշ շարք մը քատմնելի ոճապարհութիւններն ալ, հակառակ 50ի չափ Հոյերու և մեկ բանի Քիւրերու ջախջախիշ վկայութիւններուն, «չհաստատուեցան», և թշուաւականը անզատիթ մնաց: Այդ օրն էր որ անզիւական գեսարանը կը հեռազբէր իր կառավարութեան. Պօստոնեան արգարութիւնը այսօր պառնկացաւ մարդաշաղաքին մէջ. Մուսա պէյ առջառ արձակուեցաւ. ու այսպէս գիմակազերծ կըլլար Ստլթանի կառավարութիւնը Երուարայի առջեւ: Ես յն օրը հայ ժաղովուրպն ալ վերջնականագրէս կը համոզուեր թէ ո՞րքան յիմարտթիւն է մի մի այն օրինաւոր միջոցներով Թուրքին արգարութիւն խընդույուն քաղաքականութիւնը. այդ օրը հայ յեղափոխական գաղափարը կունենար իր գոյութեան անժխտելի պատճառը, և իդաւունքը:

Ուրեմն կիւլիզարի դէմքը, իր սասացած այս մեծ նշանակութիւններով, գարձաւ հայ ժամանակակից պատճառիթեան անհաւանալի անցքերէն մին:



## ԱՐՁԱԳԱՆԳ

— առջ —

Երէ ցուտ լուսացեն,  
Թարինդ աղաղակեսցեն:,,

Պատզամախօ՞ս ես դու մեզի համար Տարէ:

— Հա՛, մարզարէ:

Ճիշդպատախանութեամն խնի՞ հարցմանց սաւ:

— Հարցմանց սաւ:

Հայաստանին Երկինի՞ կ՞րք կուտայ Պարմէ:

— Երք կուտայ արուն:

Թարին բափենի՞ մեզ ծագի՞ արդ արեւ:

— Ծագի՞ արդարեւ:

Մեզ պէսէ ե լոկ կարծենի՞ ուսու սէր:

— Ան սունե՞ր:

Թէ հայորդի՞ են հարազաւ . . . .

— Են յար ազա՞ս:

Երկիր կառնո՞ւ նոր ողի:

— Նորողի:

Լարի՞ մեր բուր, բուրդ . . . .

— Թո՞րիր ու Բուրդ

Կորջի՞ անօրէն. . . . .

— Ան օրէն:

Մորենս ա՞րիր . . . .

— Արիր:

Մէն մի մարդ . . .

— Ի մա՞րս:

Ի Մա՞րս:

— Ա՞րդ:

\* \* \*

Բարեւն անզաւ աղաղակեն, Տարողէն.  
Թէրահաւատ Հայերը դեռ չի լսեն:

Ա. Ո Հ Ա Զ Ա. Կ

Ճեռաւոր երկիր նըստած դու նըժդե Ճ  
Հայրենեացբազզին մօտուստ ես տեղեակ,  
Քարող քաջարի նոր ըսկըզբանց վեհ,  
Յեղափոխութեան ձայնատու ՀնջԱկ :

Ռոր դաղափարի քո ցանած սերմաՌ  
Աղնիւ պըտուղներ հասուննան արագ .  
Կարին և Պօլիս, որոտման նըման ,  
Անդրանիկշարժմունք ծընանքե՛ւ, ՀնջԱկ :

Խար բըանակալը , Հայոց կեղեքի Խ  
Վախէն պահուեցաւ ոսկի դահին տակ.  
Խուլ Եւրոպայի թընդաց մէն դահիճ ,  
Հայը ցընցուեցաւ , կարմրեցաւ ՀնջԱկ :

Ռյօր քո սերմանց նոր պըտուղք ահՌ  
Հասած կարմըրին՝ արեան նըմանակ .  
Կենաց և մահու ոուրբ ժամ մերձենայ,  
Կարմի՛ր հրաւէրիդ ակն ունիմք, ՀնջԱկ :

Ռոշնակդ հընչեցուր , հընչեցուր արեՌ  
Թող՝ Հայք ոուր Ելնեն ծագէ մինչե ծագ .  
Փրշրի՛ ժանտ շըզիման, ծագի՛նոր աւեդ,  
Ազա՛տ ենք» հընչէ՛ ոոկէզօծ ՀնջԱկ :

ԽՕՄՔ ԱՌ ԲՌՆԱԿԱԼՆ

Աս ի՞նչ է դարձեալ , խեղճուկ բանաւոր ,  
Ի՞նչ իրարանցում , մըրիկ ու տագնապ .  
Դարձեալ ի՞նչ խռովից հանդիսագ անցաւոր ,  
Ի՞նչ երազ տեսար , ինչո՞ւ այդ սարսափ :

Ինչո՞ւ զինուորաց բազմաթիւ վսհմակ  
Առաքես աստ անդ՝ ի դաշտ և գտառ .  
Արդեօք դարաւոր թշնամւոց բանա՞կ  
Կարշաւէ վրրագ — թըւով անհամար :

— «Ո՞չ , ո՞չ . սարսափիս ուրիշ է պատճառ .  
Ո՞չ Մոսկով կայ դէմս ո՞չ թշնամի դունդ ,  
Այլ մի ամբարիւտ մարդ խըսովարար  
Եկեր կը յաւղէ Մըշոյ ժողովուրդ .

Վախեմ միամիտ իմ հրավատակներ  
Սնան իւր գըրդմանց , ինձ գէմ սոր ելնեն .  
Բայց յայս ունիմ որ իմ սատիկաններ  
Շուտով զինք մեռած կամ ողջ ինձ բերեն .

— Հէ՛ , Եթէ իրօք այդշափ է միայն  
Պատճառ երկիւզիդ , բըռնաւոր խեղճուկ ,  
Կոշտ ծիծաղելու նախ տուր ինձ հրաման ,  
Յետոյ մի խըրատ տամ քեզ անկեզծուկ :

Կը կայելէ՞ քեզ, արքայդ մեծաշուք,  
Ծովու ցամաքի գու տէր ինքնակալ,  
Նըստած ի գահոյս պերճ ռակեճամուկ՝  
Մի մարդու առաջ մըկան պէս դողալ. . .

Եթէ դու՝ իրօք՝ բարի ես արդար,  
Ինչպէս երեսպաշտը սովոր են ասել,  
Թէ հովանուոյդ տակ՝ աղդեր հաւասար,  
Աղատ, բարեբաստ կարող են ապրել.

Թէ ժողովրդիդ զարդացման՝ իրօք՝  
Ու բարօրութեան բազմակողմանի  
Գիշեր ու ցերեկ անքուն տանիս հոգ,  
Թէ այս է ողին քու մէն հրամանի.

Թէ ժամանակիս նոր ըսկզբունքի  
Կը համաձայնի գահիդ գոյութիւն.  
Թէ արդարութեան և իրաւունքի  
Հայելի է քու օրէնըսդրութիւն.

Այդ պարագային, մեծազօր արքայ,  
Այդքան սարսափի և իրարանցման  
Քու վեհանձնութիւն պէտք չէ տեղիք տայ.  
Քու իշխանութիւն կը մնայ անօստան.

Եւ շատ չի տեեր՝ զայն չար ապըստամբ՝  
Որ յուղել ջանայ ամբոխը քու գէմ,  
Կը բերէ քեզի ժողովուրդն անձամբ՝  
Ելզիթայի զարկած, դրա՛ւ կը գրնեմ:

Իսկ թէ բըռնաւոր ես գու արդարեւ,  
Թէ արիւնաներկ կըրես զըլիսիդ թագ,  
Թէ մերկ ու նօթի, թըշտառ, անարեւ  
Աղգեր կը խեղդին անարդ լուծիդ տակ.

Թէ չես գու ռամկին իրաւանց յարդող,  
Այլ զայն նըլկատես գերի և բատրուկ,  
Թէ կեղեքիչ ես և վեհափառ գոզ  
Ժողվրդի արեամբ սընանող տըզրուկ.

Թէ չեն իրաւունք արդար հաւասար  
Գահիդ պատուանդան և հաստատութիւն,  
Այլ տըզիտութիւն, բըռնութիւն, խաւար  
Լոկ զայն կը պահեն գեռեցս կանդուն.

Ո՞հ, գիտցի՛ր յայնժամ թէ չէ ամբարիշտ  
Այն որ քեզի գէմ յուղէ զժողովուրդ,  
Այլ Ազատութեան ախոյեան՝ զօր միշտ  
Պիտ օրհնեն ապա թէ՛ հայ և թէ բուրդ:

Գիտցի՛ր, հալածանքդ ոյինչ չեն արժեր.  
Թէն ըստանաս բանտ, մահ, կախազան,  
Միշտ պիտ զըտնըւի մի մարդ անփեհեր  
Որ զծմարտութիւն քարոզէ մարդկան:

Գիտցի՛ր, ալէկոծ կեանք պիտ վարես միշտ.  
Յերեկ՝ ահ, սարսափ, գիշեր՝ քուն ընդուստ,  
Պիտ մաշեն սըրտիկդ կասկած, կոկիծ, վիշտ.  
Երեկուան գնրին՝ այսօր գէմէ ըմբաստ . . .

Գահրդ երերուն, փառքրդ խարուսիկ,  
Շուրջըդ անէծք, վայ, նըզսվք, լայ ու կոծ.  
Այ իմ բրւնաւոր, անկամդ է մօտիկ,  
Տե՛ս օրհասական մարտի կրակ ու բոց . . . .

Քեզ գէմ պիտ կանգնի ո՛չ թէ միայն Մուշ,  
Այլ սէգ խրտաւապանձ Հայաստան ողջոյն.  
Պիտ յաղթանակէ, թէպէտ քիչիկ մուշ,  
Ժողովրդային վեհ ճրշմարտաթիւն :

Եւ բազմաչարչար մարդկութեան վերեւ  
Հուսկ պիտ տարածի հաշտութեան կամար,  
Եւ Ազատութեան պիտ ծագի արեւ  
Գերւոյն՝ գերտին վրբայ հաւասար :

Ստուն, 1892

ԲԱՆՏԱՐԿԵԱԼ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ

Կըշտացի՛ր, ո՛վ թուրք, ահա բռնեցիր  
Յեղափոխիչ մ'ալ, ու շղթայեցիր.  
Քու կատաղութեան եղայ ես ալ զոհ,  
Բայց, դո՛ւ բռնաւոր, դիացի՛ր որ եմ դոհ:

Այս այն խաւարչուտ զբնդանն է ահեղ  
Ուր անկարեկիր ձեռքդ արիւնահեղ  
Շատ մ'ինձ նըմաններ կաշկանդեց բերու,  
Բայց ահեղ բանտն ալ անսնցմէ վախցաւ :

Նոյա ոլրտերն էր անվեհեր ու քաջ,  
Կամին էր երկաթի, ոգին աննըւած.  
Զանոնիք լափեցիր, նոյա ոոկրերէն  
Նոր վըրէժխնդիրք ելան քու առաջ :

Այս այն զբնդանն է տը Հեղէնն ու Աերպ  
Մըտան տանջւեցան տանջանօք կերպ կերպ,  
Ուր Սև-Եռունցին և Պուրկարըն հէգ  
Մըտան, բոյց այսօր քու գէմ պարծին սէգ :

Ես կը համբուրեմ այս ժանդու շղթայն  
Որով կապեցիր քաջ դիւցազոնիքն այն.  
Նոյա տրինով փըրկեցան աղգեր,  
Դողա՛, բը՛անաւոր, մերն է Ապագայն :

Ուր սեւ ամպերէն կը ցոյ ոեն կոյծակը,  
Ցուրտ գայլախաղն իսկ կը հանէ կըրակ.  
Մըթին երկընքէն ծաղի արեւակ,  
Մօրը երկանքէն ծընանի զաւակ :

Այսպէս մեր արդի արտսուք և հառաչ  
Են ապագայն բերկրանք և աւտչ,  
Եւ մեր արիւնու շղթայից շառաչ  
Ամբով մեծ աղդ մը կ'հանէ քու առաջ :

Ուրեմն կը մտնեմ ես բանտը յօժար,  
Կը պագնեմ շղթայս, դրկեմ ըզիսաւար.  
Անարդ լուծէգ լաւ է ինձ կախաղան,  
Յեղափոխականիք մահուան հետ խաղան :

Բայց , դու բըռնաւոր , ինչո՞ւ կը սարսես .  
Միթէ կը փախնա՞ս որ մահս չի մարսես .  
Դու , քա՞զդ և հրզօ՞ր , ա՛լ ի՞նչ կը դողաս ,  
Երբ արիւնստ սուրդ իմ կողս ես մըխած :

Բայց ո՞չ , վերջապէս , կերեւի՝ զգայիր  
Թէ հալածանքդ ևն ի զուր , ի նանիր ,  
Թէ օրհասական ճըգանցդ հակառակ  
Պատի ազատուի Հայաստան երկիր :

Արդ ինձ ի՞նչ փոյթ է բանստ , տանջանք , զընդան .  
Վերջին հասաչս է . կեցյէ՛ Հայաստան .  
Ինձ ի՞նչ փոյթ և մահ . մահուամբս հարազատ  
Մարտիրոս աղդը կը մինի աղատ :

Մուս , 1891

## Ա Խ . . . Հ Ա Յ Ե Ր

Զեզ կը ծեծէ մէկ աստիկան ,  
Քուրդն ալ ըզձեղ կը խօշտանգէ .  
Միշտ կը տանի մալ , կին , թալան .  
Դուք ձեռնածալ՝ “Հոդին թանկ է” ,  
Կրոէք , նըստիք .—ա՞խ , ստրուկ Հայեր ,  
Մինչ ե՞րբ վախնար , չեք դիմադրեր :

Անհաւատներ կը հայնոյեն  
Խաչ և հաւատք , աղդ և օրէնք .

Կեավուր , ֆեամիր , միայ ձեղ կանչեն ,  
Դուք աւելի պատուէք զիրենք  
Լուռ և խոնարհ .—ա՞խ , մո՛ւնջ Հայեր ,  
Ե՞ր դուք կամաւ էք պապանձեր :

Որբոց լալիւն , ոզք զըրկելոց ,  
Բանաեալ եղբարց գառն հառաչանք ,  
Առեւանդեալ քերց ճիշ ու կոծ ,  
Որդեկորօյս մարց պազատանք  
Զաշխարհ բռներ .—ա՞խ , խո՛ւլ Հայեր ,  
Եր խըղճի ձա՞յն ալ չէք լոեր :

Հայաստանը անշըրացաւ ,  
Բուի դարձաւ բընակարան .  
Բոց շուրջ պատեց , ծուխ ծառացաւ ,  
Հայոց չէն տունք ամայացան .  
Մեր յոյս յնդի՞ .—ա՞խ , կո՛յր Հայեր ,  
Երբ ըսթափիք , բանայք զաշեր :

Զեր սրորան և նախկին տուն  
Բոցաճարակ՝ ձեզ կըսպասէ ,  
Եւ բոլորիս մայրն “Օգնութիւն” ,  
Բաղկատարած կաղազակէ .  
Դուք չէ՞ք շարժիք .—ա՞խ , կա՛ղ Հայեր .  
Դէոլ Հայրենիք ո՞վ չի վաղեր :

Օրհասական այս ժամաս մէջ՝  
Երբ պատեր է բնդ հանուր սուզ ,

Պէտք է դործել, դործել անվերջ,  
Կոռւիլ, օգնել, որբել արտառք,  
Փրւած կանգնել.—ա՛խ, ծոյլ Հայեր,  
Ո՞ւր էք դուք, ո՞ւ ծակն էք մըսեր :

Անձնանըւէր հայ կըորիձներ  
Ոչ զէնք ունին և ո՛չ ալ հաց,  
Հարուստ, ժանդու քո ուկիներ  
Է՞ր խընայես, քըսակըդ բաց  
Աղգին համար .—ա՛խ ժլատ Հայեր,  
Ո՞վ իւր ուկին հետն է տարեր :

Հայն ալ անշուշտ կը փըրկըւի՝  
Թէ որ թափէ ճիգ անվըհատ .  
Թուրքն այս դիսէ ու փըրփըրի,  
Դուք է՞ր մընայք թերահաւատ  
Եւ անտարբեր .—ա՛խ, վա՛տ Հայեր,  
Աղատութիւն դուք չէ՞ք սիրեր :

Պոռտախօս, բազդախընդիր,  
Սուտ ազգաւէր դո՞ւք խաբեբայք,  
Որ տայք ազգին յոյսեր պատիր,  
Ապագային հետ խր խաղայք  
Զեր սուտերով.—ա՛խ, կե՛զծ Հայեր,  
Արդեօք ձեր խիզճ ձեղ յի՞ տանչեր :

Դո՞ւք, սի՞նլըքոր չար վասակներ,  
Որ միշտ լիզէք պիզծ դարշապար

Եւ կը մատնէք ազգ և ընկեր  
Ավ մի ժանդու ուկու համար .  
Հայի՛ ցեցեր,—ա՛խ, դա՛րշ Հայեր,  
Չեր դատաստանն է մօտեցեր :

Հայաստանի դո՞ւք միակ յոյս,  
Կտրի՛ն եղեարք իմ հարազատ,  
Հեղնով Հայոց պիտ ծագի լոյս,  
Հինն նոր դանայ, գերին՝ ազատ,  
Իսկ դուք՝ անմահ .—ա՛խ, քա՞ն Հայեր,  
Երբ պիտ կանգնէք անկեալ ազգ մեր :  
Վարդինը (Սասուն), 1892

## ԿԱՐՄԻՐ ԿԱՐՄԻՐ

— ԽՈՅՅԻ —

Երկնից սահանք վազուց փակուեր,  
Երաշտ չորսուց Հայոց արտեր .  
Ա՛խ, գէթ կարմիր անձրեւ կաթէր,  
Մեր կորդ հողեր պըտղաբերէր . . .

Թօներ է վարդ և մանուշակ,  
Աղբանց արուն դարձեր սիպտակ .  
Ա՛խ, ե՞րբ իջնէ ցօղ կարմորակ,  
Ոռողէ մեր ծաղկանց բաժակ . . .

Երկարեցաւ գիշելն իսպառ ,  
Տըխո՛ւր , ամպո՞տ , մոլթ և խաւար .  
Ա՞լս , Ե՞րբ կարմիր արշալոյս վառ  
Ասկեղօծէ երկնից կամար . . . .

Երկարեցաւ ձմեռն և ձիւն ,  
Ծածկեց զերկիր պատանիք անհուն .  
Ե՞րբ պարզեւէ մեղ բընութիւն  
Կարմիր Զատիկի , կարմիր Գարուն . . . .

Բայց հա՞ կարմիր վարդն ու կակաչ ,  
Համիան հագնի գորդ նոր կանաչ .  
Վազեն առուք քաղցր ի կարկաչ ,  
Սրեւ փայլէ կարմիր ճաճանչ . . . .

Կարմիր վարդ ու կարմիր հարսնուկ  
Ելեր փընտաեն հարսներ կարմուկ .  
Ել , պատանեա՞կ , քաղէ ծաղկունիք ,  
Յօնէ նոցա արեամբ ներկուկ :

Կարմիր գըրօշ կուղէ հայ մարդ ,  
Հարսնե՛ր , առէ՛ք մի շղարշ ու զայդ  
Կարմիր ներկած յայտերուդ վարդ  
Բնծայեցէք նըմա զըւարիժ :

Առ քու գըրօշդ , ու ել կանդնիք .  
Նըշանդ կարմիր , արինդ կարմիր ,  
Կարմիր ներկէ նաև զերկիր ,  
Անմահ անուն քեղ վաստըկիր :

Հայեր , մենք շատ թափենիք քըրտինիք ,  
Փոխան ոչինչ քաղենիք արդիւնիք .  
Եկէ՛ք քիչ մ'ալ կարմիր քըրտնինիք ,  
Որ մեր վաստակն օրհնէ երկինիք :

Մեր պաղատանիք , բողոք անդուլ  
Չեն լըստիր բնաւ , աշխարհ մնայ խուլ .  
Իսկ երբ արիւն առնու հեղուլ  
Զայնը հասնի աստղերու բոյլ :

Հայ աշխարհին ժըպտի Գարուն ,  
Թէ մենք թափենիք կարմիր արուն .  
Փոխան կանաչ մեր արեւուն՝  
Հայաստանը դառնայ Հայուն :

Եկէ՛ք զոհե՞նիք կարմիր , կանաչ(1),  
Եղբարց և քերց՝ սրգւոց առաջ(2),  
Որ շուրջ լըստի երգոց աւաչ ,  
Հայեր խաղան կարմիր—կանաչ(3):

Օ՞ն , մեր կենաց նարօտը թանգ  
Քաղցր հայրենեայ մեր նըւէր տանիք .  
Անկէ կարմիր—կանաչ—սիպտակ(4)  
Մասեաց գըլիստն հիւսուի պըսակ :

Կարմրող(5) լինի կարմիր վարդան ,  
Ապըղ՝ թաղւոր վարդի նըման .  
Կարմիր(6) ցօղեն միոյն տապան ,  
Կարմիր ըմպեն միոյն սեղան :

Կարմիր, կարմիր՝), հիւթ կենսալիր,  
Քեզ կարօտ է Հայոց երկիր.  
Յօդէ՛ շիմԵրդ ազատաձիր,  
Մեղ նոր կեանքի փրլկանք եղիր։

Մուշ, 1892

ԲԱՌԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

1) Կարմիր, կանաչ, այսինքն կարմիր արիւն, կանաչ արիւ, ինչպես բռուած է նախորդ տան մեջ; — 2) Որդոց առաջ Մոյ ասացուածով կը նեանակէ որդիներու համար, անոնց սիրուն (տնկ, ուղրունա): — 3) Կարմիր — կանաչ կը նեանակէ հարսանեկան պար, այսպէս, խաղանք զրու կարմիր — կանաչ խօսք մաղրանք մ' է Մոյ լեզով եւ կը նեանակէ հարսնիրիդ ներկոյ գանուինք: Կարմիր — կանաչ կը նեանակէ նաև հարսանեկան նորուու: — 4) Կարմիր — կանաչ — սիրուակ, այսինքն նայկական հին դրուակին եւել զոյները: — 5) Կարմիր, այսինքն արիւն թափերով մեռնողը: — 6) Կարմիր, այսինքն զինի: — 7) Այս վերջին տան մեջ կարմիրը դրուած է արիւնի նեանակուրեամբ:

ՄԱՍԱԿՈՐ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

բազէս զարգացած և հասունցած, երբ այդ ժողովներով իր իրաւունքներուն, իր ազատութեանը համար զինքավ կռուելու, արիւն թափելու ընդունակութիւնը գործով ցոյց կուտայ: Զանց առնելով այդ երեւյթին գործնականի մէջ ստացած արտայացութեան այս կամ այն ձևը, — այսինքն գործունէութեան նախուակայարմար կամ վասակար կերպերը, — ինքնին այդ երեւյթը, ընդհանուր տաճակը, երբ ազգի մը մէջ ի հանգէս կուգայ, շատ պատուաբեր, արտավազի և յուսադրական է, վասն զի ամենէն տպաչով նշանն ու գրտականն է թէ այդ ազգը կենդանի է, տնի ներքին ուժ, ու պիտի չմեռնի, այլ ուշ կոմ կանուխ ձեւը պիտի բերէ կեանքի այն նոր պայմանները որոնց կը ձգտի: Այդ երեւյթին մեր մէջ ի յոյյու գոլուն փափագն է որ ներշնչած է, ինչպէս շատերուս գործունէութիւնը, նոյնու և վերողը եալ տողերը: Այս ծանօթութիւնը բոլորովին աւելորդ պիտի ըլլոր, եթէ, Հայութեան արիւնաքամ եղած մէկ միջոցին, չի գտնուէին կարգ մը մարդիկ որոնք յեղափոխականներու գործը և խօսքը և զիստաւոր թիւններու լաւագոյններն անդամ՝ շարաւառութեամբ մեկնել և խեղաթիւրելը իրենց բան գործ րրած չըլլացին:

Ըստ Հարկ չեայ, որ վերտպրեալ ոտանուարը անօշ գուտ և կորստարեր արիւնահեղութիւններու իրը փափար կամ իրը քաջալերանք մը ոլէտք չէ որ մեկնուի, այլ ժող զովոզի մը շարժումով, յեղափոխութեամբ, մէկ խօսքով՝ արեան զնով իր կեանքի իրաւունքները սպահանջելու և ստանեալու փառաւոր և պատմական ձգտումին իրը մէկ պարզ և ընդհանուր արտայացութիւնը: Ճարովրդի մը զիստաւոր թիւնը այն տակն միացն իրնաց համարուիլ ի-

ԱՐ ԽՄԲԱԿՆ  
Ի ՔԱՐԵՄՍՈՒԻԹ

Ընկերք, տեղէս Քարէմըուր  
Արձրկեցէք հայեացք սուր սուր  
Դէպ Մըշոյ գաշտ հարթ ու դուրան.  
Ա՛հ, գեղեցիկ է բայց տըխուր :

Տեսէ՛ք մօտ մօտ Հայու գեղեր,  
Անոնց բոլոր կանանչ արտեր .  
Գեղրանց թիւն է հարիւրէ վեր,  
Մակայն ափո՞ս որ են անտէր :

Երբ գեռ երկրի հալն անուշ էր,  
Միշտ ծըխային բուխերիկներ .  
Անոնց ծոխէն ամառ ճըմեռ  
Մըշոյ գաշտը միշտ մըշուշ էր :

Իսկ մեր ատեն օսմանցու լուծ  
Մեր ծըխանաց ծոխըն անցուց .  
Հոգմանթ անկուշտ արդիուկի պէս  
Մեր ոսկերուն ալ քամեց ծուծ :

Աւեր, թալան, բարանութիւն,  
Առևանդում, հըրձրդութիւն  
Բզգաշտեցու քանդեցին տուն .  
Ոչ կոստք մընաց ոչ ազդութիւն :

Թուրք ու Զաշան, աւազակ Քուրդ  
Կողոպտելով մեր ժողովնորդ՝  
Զայն դարձուցին ոչխար անբուրդ,  
Բայց, ա՛խ, դարձեալ իւր սիրան է ցուրտ :

Մըշոյ գաշտը խոպանացաւ,  
Բայց այդ չի տար այնչափ մեծ ցաւ .  
Խիստ բրանտթեան ու զուլմի տակ  
Դաշտի Հայը ըստըրկացաւ :

Մամիկոնեան քաջ Վարդանի,  
Մուշեղի ու Գայլ Վահանի  
Սերունդները գառնան ըստրուկ .  
Յամիկի՛ր դուն ալ, Արածանի՛ :

Զարթիր զարթի՛ր, սերունդ քաջաց .  
Դլուխըդ վե՛ր առ, աչքերըդ բաց .  
Աղատութիւն հասեր քո դրաց,  
Խակ գու նընջե՞ս, կանգնէ ստաց . . . .

Բայց, վա՛խ, ըստրուկն հաւատք չունի .  
Խօսք ու խրատ նա չընդունի .  
Մինակ ճէտոր զօրծ կենդանի  
Է փարատիչ իր խոր քընի :

Այս, ընկե՛րք, ձեզի կրում,  
Վրէժխնդրութիւն զրկողին գէմ,  
Մարտափ ճրգով զօրծեր վրում  
Անկած ողին լոկ բարձրացնեն :

Եւ ի՞նչ նպատակ քանց զայս հմայիչ ,  
— Տառապելոց եղնել փրկիչ ,  
Սըրտապընդել խեղճ ստրուկներ ,  
Անիրաւին եղնել դահիճ :

Այս բարձըր միտք դուք սիրեցիք ,  
Այս առւրբ նպատակ դուք գըրկեցիք ,  
Եւ կազմեցիք զայս հրոսախումբ ,  
Թըշուառութեան դէմ կանդնել թումբ :

Ընկերք , տեղէս Քարէմըսուր  
Սըձկեցէք հայեացք սուր սուր  
Դէպ Մըշոյ դաշտ երկայն ու լայն ,  
Ասպարէլ ձեր դործին է այն :

Քարէմըսրէն մինչի թօսուր ,  
Մինչ ի նեմրուտ և ի Գըրկուռ ,  
Մինչ Մեղրագետ և Մուրատ ջուր ,  
Մինչ պատմականն Ոսպընբըլուր .

Մինչ ի Սերկի սար կալնեբեր ,  
Մինչ իննակնեան սուրբ պըրակներ ,  
Մինչ եղերդուալն բազմազբիւր ,  
Մինչեւ ի Սիմ սար ծաղկատիւռ ,

Որի նելքեւ բարձրանայ Մուշ՝  
Մեր ցանկալի քաղաքն անուշ .  
Մինչ այս ամէն սիրուն սարեր ,  
Որք ավնածիր ըղթաշտ պատեր ,

Սահմանք են ձեզ , ձեզ կըսպասեն .  
Ծադէ ի ծագ ձեր քայլերը  
Զայդ ամէն վայրք պիտ չափչրփեն .  
— Բայց և անոնք ձեր դործերը :

Եւ այդ ամէն տեղերուց վեր  
Կը բարձրանան թըշուառ թեւեր ,  
Եւ պաղատանք , աղերսք տըխուր  
Դէպ ձեզ , դէպ ի Քարէմըսուր :

Դացէք սըրբել այդ արտառուքներ ,  
Պաշտպանել մեր հայ աղբրուկներ ,  
Ու ջախջախել օձք թունաւոր ,  
Սրդարութեան եղնել զինուոր :

Սըրտացուցէք սարսափածներ  
Սարսափ տալով տուշմաններուն ,  
Մեացընելով չարադրծներ  
Դոք կեանք տըւէք մեռելներուն :

Մեծ է ձեր դործ՝ բայց խիստ դըժուար ,  
Ինչչափ տեղերա են ծաղկալից՝  
Անչտափ վըշոտ՝ ձեր ճանապարհ .  
Դոք պիտ անցնիք կըսկի միջից :

Ո՛չ թէ միայն վէրք , բանտ ու մահ  
Հեր բաժինն են , այլ և շատ հազ  
Անջուր անհաց պիտի մընաք ,  
Պիտի պառկիք բաց երկնից տակ :

Գիշերները իբրեւ չըջիկ  
Դուք անդադար պիտի շըրջիք :  
Լուսադէմին՝ չը զարկած զանկ՝  
Համնիք Ծըծմակ կամ Ալիչանկ :

Բայց և ցերեկ՝ ըստ պատշաճի՝  
Պիտի շըրջիք նըման քաջի .  
Թէ հարկ ըլլայ՝ պիտի կըռւիք,  
Կամ պիտ յաղթէք կամ պիտ մեռնիք :

Ախ , աղբըրտանք իմ սիրելի ,  
Դրժուար է գովծն , այլ խխառ բարի .  
Մատաղ եղնիմ ձեր ոսմերաց ,  
Կըրտիճ եղնիք և աչքաբաց :

Կերդուրնցընեմ ուխտով ամուր  
Չեղ այսօր յայս Քարէմըսուր ,  
Չեր գործին մէջ չընէք իուսուր,  
Որ ձեղ գովէ Հայն ընդհանուր :

Չեղ առաջնորդ եղնի լեւոն ,  
Չեղ քայլեր Մուրատ , Մելքոն ,  
Հոգւով ձեղ հետ է Արարօն ,  
Չեղ կը դիտէ ամիովը Տարօն :

Բնկե՛րք , անզէս Քարէմըսուր  
Արձրկեցէք հայեացք սուր սուր  
Դէպ Մշոյ դաշտ երկայն ու լայն .  
Օ՞ն , դիմեցէք յասպարէզն այն :

ՅԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այս տոմսնաւորը ձօնուած է 1892 թուին Տարօնի  
մէջ կաղմակերպուած յեղափոխական հռուտխմբին , որը  
առաջին անգամ երեցաւ Առուտարինչ գեղին վերեր՝  
Քարեմուր կոչուած ապառաժուած տեղը , ուսկից աչքի  
առով կը պարզուի Մշոյ դաշտի համատակած տեսարանը:

ՖՐՖՈՒԲԱՐ<sup>(1)</sup>

Քաջ Տալւորցու ապաստան  
Նեղ օրերու և կըռուի ,  
Այսօր բոլոր Հայաստան  
Յուսալից քեղ կը յառի .  
Ժայռ սե ու լերկ՝ զօր և երբ  
Քամին քերէ առ եղերք՝  
Կը ֆըրֆըրուասը) զինչ վիշապ  
Կամ ալէտանջ զինչ ծովափ .  
Ով Ֆըրֆըրուար ապալեր ,  
Որ սեպանաս Փորին ի վեր :

Ախ , մինչ այսօր շատ Հայոց  
Սիրոն ալ կարծես Ժայռ դարձեր՝  
Եղբարց և քերց լոց ու կած  
Հոն սէր ու դոթ չարձարձեր ,

Այլ իրար դէմ քինախանձ  
Հոն բոյն են դրեր կիրք, նախանձ.  
Գէ՛թ սիրտ մեղ տան քո բարձունք,  
Սրբեն աշաց մեր արցունք.  
Ով ֆըրֆըռքար ապալեր,  
Զըրկեալներու պաշտպան լեր:

Դուն կանգնած ես փառահեղ  
Ազատութեան իբր կոթող,  
Սառնամնիք ի հեղեղ  
Դառնան՝ լիդեն ոտքիդ հող:  
Ծովասարն ու Մարաթուկ,  
Անտոք, Կէփինչ) վեհաշուք  
Կը նախանձին քու վըրադ:  
— Իրենք բարձր են, դուն ազա՞տ.  
Ով ֆըրֆըռքար ապալեր,  
Մեր փըրկութեան օրդան լեր:

Դուն փարսն ես Հայութեան,  
Եւ սարսավն ես Քուրդերու,  
Մեր պարիստն ես ամրութեան  
Դէմ բրոնակալ Թուրքերու.  
Անձաներուդ մէջ ահեղ  
Առիւծներուն լոկ տաս տեղ,  
Ցից ժայռերուդ ի կատար  
Արծիւն առնու լոկ դադար.  
Ով ֆըրֆըռքար ապալեր,  
Միշտ քաջերու սատան լեր:

Թէ Տալորկի վրայ քալէ  
Թըշնամի զօրք անհամար,  
Քըսան տարուան տուրք ուղէ,  
Հայն սիստ ըսէ . Եկ ու առ.  
Խոկ ինք քաշուած Ֆըրֆըռքար՝  
Տեղաարափ դէպ ի վար  
Քար սումբ փոխան փարայի  
Տոկատվը տայ սիտի.  
Ով ֆըրֆըռքար ապալեր,  
Յայնժամ նոցա ասպար լեր:

Զօրաժողով գեղէ գեղ  
Թող հաւարին հայ քաջեր.  
Պերմ ու Քարակայ) ու Մըջեղ,  
Խիյանը և Խուրի, Սիմ սարեր  
Թող խըլլըրտին հաւասար,  
Թող որոտայ ձորն ու սար.  
Հայք Ժող կըուին քաջի պէս,  
Գլորեն թուրք Քուրդ, որ անսնեա  
Ով ֆըրֆըռքար ապալեր,  
Հազարք յանդունդ տապալեր:

Թող սասունցի առիւծներ  
Մըորնչելով ամենի  
Վաղեն զիմեն զըսիսդ ի վեր,  
Անտի զինչ ուղիս կատաղի  
Արշաւեն վար դէպ ի Մուշ,  
Հընձեն ամեն տատասկ փուշ,

Քաղաքն ու դաշտ սաք ելնեն,  
Քաջ Սաստնցուն ձեռք մեկնեն.  
Դու՛ Ֆրբֆըռքար ապալեր,  
Տուր զօրութիւն քաջալեր :

Երբ ապատուի Հայաստան,  
Մի բերդ շինենք Ֆրբֆըռքար .  
Վեհ դրոշակը Հայկական  
Սնդ ծածանի վառ ի վառ .  
Ետրջ լեռ հովիտ թող խայտան,  
Հարսունք կուսանք թող ծափ տան ,  
Եւ մեծ Տօնին թընդանօթ  
Մեծաշառաւ տայ որոտ .  
Հայոց պարծանք Ֆրբֆըռքար  
Թող հըռչակուի գարէ գար :

Սասուն, Ֆրբֆաքարի ստորատէն, 1892

Խ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

1) Ֆրբֆաքար, Անմաշչելի ապառաժուտ կողերով սարա-  
տափ մէ որուն ուրցը, մեկ մեկ կիբեներու բերան՝ շար-  
ուած են Տալուրի համայնքի 7 բաղեր. Տալուրիկ (Եղու-  
տուն եւ Մերկեր), Հաղմանք, Հաղպենք, Գլավենք, Խլու-  
միտ, Փարխ, Հանուտ, եւ Հարթք (Աերջին երկուքը սպի-  
րաբար մեկ բաղ կը հաւուուին):

2) Երբ մարդ Փորխին դեպ ի Հոսնու երքալու հա-  
մար կը մազլցէ Ֆրբուհարի կոյն ի վեր (ամենալանգա-  
ւոր համապարհ), կը լէ խոմիին սոսափիւնը կամ, տեղա-  
կան լեզուով, Փրբուալը, այս մասնաւոր ձայնը առաջ  
կուզայ կիբեներու մէջ գրացած օդային ուժգին հասանիլի:

ապառաժներու ծալ ծալ երեսին սփեփուելով անցնելին :  
Ասկէ առած է լեռը իր Ֆրբֆաքար անունը:

3) Ծովառար, Մարտիւկ, Անտոր, Կէփին. Սասուն  
լեռներուն ամենեն բարձրաբերձ զագարներն են. Ֆրբու-  
հար այդ լեռներու բարձրութիւնը չունի. բայց զինք օր-  
շապատող կիրեները եւ հեղեղատները եւ իր կողերուն սե-  
պացած դիրքը զինք անտոկի կը դարձընեն:

4) Բարսկ կը կոչուի Տալուրիկ համայնքը իր տրա-  
կալից խումբ մը զիւղերով. մնացեալ անունները Սասուն  
զանազան զիւղերու եւ գաւառակներու անուններ են:

5) Մեծ Տօն ըսելով այսեղ կուզենք հասկընալ Հա-  
յաստանի անկախութեան տարեգարձը:



## ՊԵՐՄՑՈՑ ՔԱԶՈՒԻԹԻՒՆԸ

—ուշը—

Ամարըւան շոդ՝ որ մըն էր,  
Վաղուց բացւեր էր ազօթրաննշ  
Բայց արեք նոր էր ծագեր  
Զուխտակ գըլուխ Մարաթկիչ վրան։  
Քարուտ ճամբէն ոսստիկ թաշկած։  
—Քալած էի գիշեր բոլոր—  
Հասայ նըստայ մի տեղ հոված։  
Որի ներքե ոլոր մոլոր  
Դաշտի միջէն սահէր Պաթմոն։  
Եւ արեւոն ճաճանչներէն  
Փէլկըտար ջուրն ոսկու նըման։  
Կերեէին նոյնպէս վերէն  
Զուխտակ սարեր Քընարիկի։  
Եւ անոնցմէ աւելի ցած։  
Աջ կողմըս Պերմ, Ճախս կողմ Բացի, Ճ  
Եւ Բացւայ բերդ հինէն մնացած։  
Դիտելով դաշտը դարուփոս,  
Խւր ելեէջքը վեր ու վար,  
Ես իմ մըտքէն կըսէի. «Հոս  
